տոչորման մերոյ ի տարանջատութիւն զաւակին մերոյ՝ որ այսօր սեւ խապար նորա եհաս ի մեզ. միթէ չէ՞ր հերիք խարխափումն սրտից մերոց ի մրրկէ կարօտանաց նորա՝ որ այսօր մահուն հոչակն զսիրտս մեր նոր կրակով բորբոքեցոյց։ Վա՜յ մօրս տառապելոյ, զի մորմոքի սիրտ իմ ի ձգտումն տեսութեան եւ ոչ կարեմ հասանել։ Եղո՞ւկ հօրս թշուառութեան, ժամանել ջանամ եւ ոչ կարեմ տեսութեան անգամ, միթէ եկի՞ց ի վերայ երեսաց իմոց տեսանել միայն զգերեզմանն եւ առընթեր թաղիլ մնալ։ Վա՜յ ծնօղիս եղկութեան, զի գալարի լեարդ իմ ի զուժ որդեկին իմոյ, թալիթի[1]) աղիք իմ հրով բոցոյ ի վերայ զարիպ անդրանկին իմոյ մեռելոյ։ Ո՞վ տայր զգլուխ իմ ծով առնուլ եւ զաչերս աղբիւրս արտասուաց։ Սրդ չորասցի արգանդ իմ, զի ոչ կարեմ եւս զայնպիսի զաւակ ծնանել. գոսասցի ծառն, զի ոչ եւս կարէ զայնպիսի ոստս վայելուչս արձակել. խլեսցի յարմատոյ որթս, զի ոչ եւս կարէ զնոյնպիսի բերել բարունակ ողկուզաբեր. կտրեսցի տապարաւ տունկս, զի ոչ եւս կարէ պտուղ քաղցրահամ պտղաւորել. խաւարեսցին այսուհետեւ աչք մեր, զի ոչ եւս կարեմք զայնպիսի գեղեցկատիպ որդի տեսանել. պակասեսցին լոյս ականց մերոց, զի ոչ եւս կարեմք զայնպիսի անդրանիկ հասուցանել՝ չքնաղ եւ վայելչահասակ որպէս զՈհանդ. երերասցի տուն մեր եւ դղրդեսցի քաղաքս մեր ընդ մեզ ի դէպ կոծմանս։ Ո՜վ ցաւագին դառնութեանս, ի պանդուխտ վայրիդ անտես յաչաց մերոց խլեալ զորդին մեր յանդառնալին ճանապարհ։ Ո՜վ անբմբերելի բեկմանս, զի անյոյս աշխարհի տաբագրեալ զաւակն մեր։ Ո՞վ տայր մեզ զմահն քո տեսանել, ասէ, որդեա՛կ իմ Ոհան։ Զի՞նչ արասցէ եւ

1) Թաթիթլի.